

# Լևոնը և փքաբլիթները

Ժամանակի սահմանափակում՝ 2 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 256 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Լևոնը շատ է սիրում փքաբլիթներ և գնացել է խանութ դրանց ետևից: Խանութում գործում է  $1 + 1 = 3$  ակցիան: Այսինքն 3 փքաբլիթ գնելու դեպքում, նրանցից ամենաքիչ արժեցողը տրվում է անվճար: Օրինակ՝ 1000, 1000 և 1000 դրամ արժեցող փքաբլիթներ գնելու համար Լևոնը պետք է վճարի 2000 դրամ, իսկ 1000, 2000 և 3000 դրամ արժեցող փքաբլիթներ գնելու համար Լևոնը պետք է վճարի 5000 դրամ: Խանութում կա  $N$  փքաբլիթ:  $i$ -րդ փքաբլիթը արժի  $D_i$  դրամ և ունի  $V_i$  քաղցրություն: Լևոնը քաղցրի սիրահար է, բայց չի սիրում չարաշահել, այդ պատճառով որոշել է գնել ուղիղ 3 փքաբլիթ: Լևոնը ունի  $P$  դրամ և ցանկանում է գնել առավելագույն գումարային քաղցրություն ունեցող 3 փքաբլիթները, որոնք նա կարող է գնել իր ունեցած գումարով: Պահանջվում է գրել ծրագիր, որը կօգնի Լևոնին պարզել ամենաշատը ինչքան գումարային քաղցրությամբ փքաբլիթներ կարող է նա գնել:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են  $N$  և  $P$  թվերը ( $0 \leq P \leq 10^9$ ): Երկրորդ տողում տրված է  $N$  թիվ դասավորված ըստ չնվազման, որոնցից  $i$ -րդը ցույց է տալիս  $i$ -րդ փքաբլիթի  $D_i$  գինը ( $0 \leq D_i \leq 10^8$ ): Երրորդ տողում տրված է  $N$  թիվ, որոնցից  $i$ -րդը ցույց է տալիս  $i$ -րդ փքաբլիթի  $V_i$  քաղցրությունը ( $0 \leq V_i \leq 10^8$ ):

## Ելքային տվյալներ

Ելքի միակ տողում պետք է տպել 1 թիվ՝ խնդրի պատասխանը: Եթե Լևոնը չի կարող գնել 3 փքաբլիթ՝ պետք է արտածել  $-1$ :

## Օրինակ

Մուտք	Ելք
5 7000 1000 2000 3000 4000 5000 12 1 3 100 101	115

## Ենթախնդիրներ

- Ենթախնդիր 1 (11 միավոր)  $1 \leq N \leq 500$
- Ենթախնդիր 2 (16 միավոր)  $1 \leq N \leq 5000$
- Ենթախնդիր 3 (31 միավոր)  $1 \leq N \leq 200000$
- Ենթախնդիր 4 (42 միավոր)  $1 \leq N \leq 1000000$